

կան մասանց դանտարան վարչութեանց Մայր Աթոռոյ. թ. 1259:

— Յանուան վիճակային Կոնստանտինյի Աստրախանի, յաղագս զաղարկեցուցանելոյ ի քահանայապետութենէ, զՄարտիրոս քահանայն Խղբաշեանց քատանեայ ժամանակաւ ե երթարկելոյ եկեղեցական ազախարանայ, վասն կեղծելոյ նորա զտարեթիւ օրինակի միոյ. թ. 1277:

— Յանուան Գերասիմայի Տ. Թեմակային Աստրախանի, յաղագս ի քննելոյ զբոլոր ժողովրդեան Մոզդոր քաղաքի ղերեցփոխ, տեղւոյն. թ. 1278:

— Յանուան Ամենապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ, յաղագս տալոյ մանրամասն տեղեկութիւն զորանոցայ Հանգուցեալ Գրիգորի Զանչեանց. թ. 1311:

Հայրապետական Օրհնութիւն եւ Շնորհակալիք

Կոնդակ օրհնութեան եւ շնորհակալութեան յանուան Փոխանորդի եւ Հոգարարձութեան, թեմական զպրանոցին նոր նախիջեանի ի պատասխանի հեռագրի իւրեանց յառաջ 19-րդ տարեկարծի թեմական Հոգ. զպրանոցին. թ. 1196:

— Օրհնութեան եւ քաջալերութեան յանուան նորընտիր Հոգարարձութեան վանուցն Վարազայ. թ. 1198:

— Օրհնութեան եւ զօհրանալութեան յանուան տիկին Եւդոկեայ Կարապետեան Պապով ի Մոսկուայ, յաղագս նուիրարկելութեան նորա 40 արշին սեաւ թուշի ի պէտս Մայր Տաճարի. ս. Էջմիածնի. թ. 1283:



ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ԳՐԻԾԱՑՆԵԼԻՔԵԱՆ ՄԷջ.

Որ ոչ կամեցի գործել եւ կերիցի մի.
Բ. Թեա. 2. 10.

Ա.

ԱԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՐԵՐԻՄ աշխատութեան զաղաքարը շատ յաճախ յեղեղեալ է Տիրոջ քարոզներն եւ առակներն միջ: Բայց որովհետեւ այս զաղաքարին վերաբերեալ առակներն ու խօսքերը ուղղակի կերպով մեր խնդրին չեն վերաբերում, այլ կարօտ են բացատրութիւններն, այդ պատճառով ներկայ խորհրդածութեան հետ չենք կապում: Տիրոջ կենդանի օրինակը բաւական ենք համարում այդ մասին որոշ զաղաքար ստանալու համար: Աւետարաններից յաճախ տեղեկութիւն ենք ստանում Տիրոջ եռանդուն գործունեութեան մասին. յիշենք միայն Մարկոսի երկու վկայութիւնը: Մարկ. Գ. 20-22-ից տեղեկանում ենք, որ Տէրը իւր գործունեութեան միջ մինչեւ իսկ հաց ուտելու ժամանակ չէր դադարում. իւրացիները (աղգականները) նորա եռանդը դէպի իւր գործը ցոյց տուած անձնուիրութիւնը տեսնելով՝ կարծում էին թէ մոլորանալ իցէ: Մարկ. Զ. 31-32 պատմուած է, թէ Տէրը իւր աշակերտներով առանձնանում է անապատը՝ զի էին բազումք որ երթային եւ դային եւ հաց անգամ չթամանէին ուտել: Այսպէս էր Յիսուս իւր փրկչական գործունեութեան միջ:

Բայց աւելի պարզ աշխատանքի զաղաքարը շեշտուած է Պօղոսի թղթերի միջ, թէպէտ եւ միշտ պատահական կերպով, որ եւ ինքիւր պարզեցի: Բնականապէս պէտք է

խնկափ ունենանք, որ առաքելական բոլոր
[Թղթի] քառասուն համարումը պատճառներով գրուած
համարներ են, առաքելայնեցի ոչ ոք մտադիր
չէ, եղև համարագումարներով իւր վարդապե-
տութիւնը զրի առնել, այդպէս էլ աշխատան-
քի զարգացման մասին լրիւ գրութիւններ չու-
նինք, այլ հաւ ու կտոր ցրուած այս կամ այն
[Թղթի] մէջ: Համեմատաբար ամենից ընդարձակ
աշխատանքի մասին առաքելը խօսում է Բ.
Թես. Գ. 6—15: Այս հատուածի մէջն է և այն
խօսքը, որ մեր ներկայ խորհրդածութեան
համար բնարան ենք ընտրել: Որ ոչն կամիցի
գործել, և կերել, մի, ըստ երեւութին մի
խիստ անողոր խօսք, որ աւելի պատշաճ է
քարասիրտներին, քան զ[Թութեան և սիրոյ
կրօնի առաքելին: Ասկայն այս խօսքի և
ընդհանրապէս ամբողջ հատուածի իմաստը
կարգուել այն ժամանակ, երբ մի քանի խօս-
քով կշռենք այն հանգամանքները, որոնք
առիթ են առել առաքելին այդ [Թութը]
գրելու:

Յայտնի է առաքելական լծգլթերից, թէ նախկին քրիստոնեաները Տիրոջ երկրորդ գալուստը շատ մօտ էին համարում։ Հատերը յոյս ունէին մինչև իսկ անձամբ տեսնել Նորան։ Քեազոնիկէում յատկապէս չափազանցութեան էր հասել այս գաղափարը, և ոմանք մոլորութեան մէջ էին ընկել քարոզելով թէ եկեալ հասեալ իցէ օր Տեառն։ Մինչև իսկ Պողոսի անուշով մի կեղծ թուղթ էր երևան հանուած, որ նոյն միտքն էր հաստատում։ Այս գաղափարի ազդեցութեան տակ համայնքի մի քանի անդամներից կարմուռել էր ստահակների մի խումբ, որ զործ չէր կատարում և դատարկաշրջիկ կեանք էր վարում։ Առաքեալը լաւ հասկանալով, որ դատարկաշրջիկ կեանքը մայր է ամենայն չարութեան և անբարոյականութեան, մանաւանդ Քեազոնիկէի նման վաճառաշահ և ծովափնեայ մի մեծ քաղաքում, առաջին լծգլթով փորձել էր փառնել առաջն առնել, բայց ոչ միայն ի զուր էր անցել առաքեալի ջոնքը, այլ և մոլորութիւնն ու ստահակութիւնը աւելի ևս ամէլ էր, այդ պատճառով նա ստիպուած էր գրել իւր երկրորդ թուղթը աւելի խիստ և պարզ յայտնելով իւր մտքերը։ Առաքեալի հոգու վիճակը պէտք է ի նկատի ունենանք նորա խօսքերը լաւ հասկանալու համար։

Р.

Ա՛րդ, ի՞նչ մտքեր կարող ենք հանել
վերև յիշուած հատուածից և ընդհանրապէս
Պօղոսի աշխատութեան մասին գրած խօսքերից:

Աստուծոյ որ աշխատանքը առաքեալի
քարոզութեան նիւթ է, եղել 'նոյն խոյ Թեո-
զոնիկեցիների մուրումնեան մէջ ընկնելուց
առաջ, երբ քրիստոնէութիւնը 'նոր հասա-
տում էր 'նոցա մէջ: 'Նոյն միտքը արտայայ-
տուած ենք տեսնում 'նաեւ Թեոզոնիկեցի-
ներին ուղղած առաջին թղթում Գ. 11.

Աղագէ՛մ՝ Հանդարտե՛լ և դործե՛լ զիւրա-
քանչիւր և դործե՛լ ձեռք ձեռովք, որպէս Լ
դաստիարակ-իւնք քեզ : Աւանձնի ուշադրութեան
արժանի է այն հանդամանքը որ տալիս է
Տիրոջ անունով է որտեղիւր մէկ խորշէլ ստա-
հակութիւնից, զորանով կամենում է անել որ
աշխատանքի գաղափարը Աւետարանի քարո-
զութեան մի մասն է, և ինքն իւր կողմից չէ
աւելացնում:

Երկրորդ՝ որ առաքելայն ինքն անձամբ
աշխատութեան օրինակէ եղել նորահաստատ
Հաւատացեալներին համար: Յիրաւի ն. կտա-
կարանի մէջ բազմամիւս վկայութիւններ ու-
նինք, որ առաքելայր վրանադործութեամբ
վատարկում էր իւր հոցը (Գործք. ԺԲ. 3.
Ի. 34—35., Ա. Կորնթ. Գ. 12., Ա. Թես-
Ս. 9.) համայնքներին վերայ չճանրանալու
համար, թէև իրրեւ առաքելայ իրաւունք ու-
նէր համայնքին հաշուով կերակրուելու, ինչ-
պէս միւս առաքելայները (Ա. Կոր. 5—6):

Երբ որ քրիստոնեան պարտաւոր է,
 իւր և իւրայինների հացը վստասիկը ով խու-
 սափում է աշխատանքից և իւրայինների մա-
 սին հոգաբուց, այնպիսին նոյն է, թէ ուրու-
 նում է իւր հաւատը և մինչև իսկ վատթար
 է քան անհաւատը (Ս. Տիմ. Ե. 8.):

Չսրբաբեր՝ քրիստոնեան չպիտք է ձանձրա-
նայ իւր աշխատանքից բաժին հանել բարե-
գործութեան համար: Այս միտքը աւելի
պարզ արտայայտուած է Յիկեւ. Գ. 28. «Իր
գողանայրն մի՛ եւս գողացիր այլ ճանաչեալ
էստարակնդ փրօժել յեւսէ եւրո՞ւ դէպքն: Դէ
էստարակն իցն արուս՝ այլքայ իցէ»: Այստեղ
արդէն աշխատանքի բարձրագոյն նպատակն է
շեշտուած. աշխատանքը պէտք է մեր ընտանեաց

կարիքները լրացնելուց զատ՝ միջոց լինի բարիք դործելու։ Այս վերջին գաղափարը յիշեցնում է մեզ Տիրոջ նշանաւոր առականից մէկը՝ անիրաւ տնտեսի առակը՝ որ իւր մի քանի դժուարութիւնների համար շատ մեկնաբանների տարակուսանքների մէջ է ձգել։ Բայց որի միտքը ճշմարիտ աւետարանական է և արևի լոյսի պէս պայծառ։ Տիրոջ քարոզութեան համեմատ մարդիկ Աստուծոյ տընտեսներ են այս աշխարհում իրենց կոչմամբ, իրենց հարստութեամբ։ Երկրաւոր կեանքն ու բարիքը անցաւոր է, պէտք է խորագէտ լինենք անցաւորից յաւիտենական բարիք և կեանք ստեղծելու։

Վերոյիշեալ կէտերից պարզ երևում է, որ քրիստոնէութիւնը աշխատութեան վերայ երկու տեսակէտով է նայում՝ առաջին որպէս արդար հայ լատարներու միջոց, երկրորդ որպէս բարոյական իրաւունք և բարոյական հարաբերութեան միջոց։

Գ.

Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո՝ Ծննդ. Բ. 15 սովորեցնում էր զեռ ևս հին կտակարանը։ Դորանով աւելն աշխատանքը մարդու համար որպէս աստուածային պատուէր էր նշանակուած։ Ըստ երեութիւն այդ պատուէրը պատիժ էր մարդկութեան համար, բայց ըստ երեւոյթի միայն. որովհետեւ աշխատութեան պարտաւորական պատուէրը մարդկութեան ամենամեծ բարիքն էր, որ Աստուած նշանակել էր նորա համար։ Աշխատութիւնը գոյութեան արմատն է, ապրել կարող է այն անհատը, այն հաստատութիւնը և ժողովուրդը, որ յարատեւ և հետեւողաբար աշխատել գիտէ։ Քրիստոնէութեան համար առանց խորութեան ամենայն արդար աշխատանք սուրբ է, բարոյական տեսակէտով հաւասարապէս նուիրական է կոչկաւորի, երկրագործի, ուսուցչի և գիտնականի կոչումը։ Եթէ ամեն մէկը իւր կոչման մէջ արդարութեամբ ուղեւորուի է առաջնորդում։ Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, է նշին հայցէ առաջին Աստուծոյ։ Առաքեալի այս խօսքերը ցոյց են տալիս, որ քրիստո-

նէութիւնը ինչպէս ազդութեան և անհատի վերայ, այսպէս էլ աշխատութեան զանազան տեսակների վերայ, հաւասար աչքով է նայում, միայն բոլորի համար էլ պէտք է կարող լինինք Աստուծոյ դատաստանի առաջ պարզեղեն հաշիւ տալ։ Քրիստոնէութիւնը մեր անձնական հակումների առաջ արգելք չէ դնում մեր ցանկացած կոչումն ընտրել, եթէ մէկը կամենայ կոչկաւոր լինել և ոչ երկրագործ, միւսը կամենայ ուսուցիչ լինել և ոչ դերձակ, այդ մի և նոյն է, բայց որ և է աշխատանք, կոչում ընտրելուց յետոյ՝ սրբութեամբ պէտք է ընթանանք ընտրած կոչման մէջ։ Աշխատանքն անարգել՝ նշանակում է բարոյապէս ահա լինել։ Աշխատանքը ոչ միայն մեզ հաց է տալիս, այլ և առողջութիւն, հոգու զուարթութիւն։ Աշխատանքը մի մեծ գորութիւն է . . . բայց ինքնըստինքեան յաւիտենական բարիք չէ և նոյն իսկ ամենայն աշխատանք համակրելի և բարոյական չէ։ Պարզեղեն մեր միտքը։

Մենք տեսանք, որ քրիստոնէութեան մէջ աշխատութիւնը առաքելական քարոզութեան մի մասն էր կազմում, և պարտաւորեցուցիչ յանուն Յիսուսի Քրիստոսի . . . բայց ամեն աշխատանքի համար նոյնն ասել չենք կարող։ Աշխատանքը սրբազան բնաւորութիւն է ստանում, երբ բարոյական շարժառիթներով է կատարւում և յաւիտենական բարիք ձեռք բերելու միջոց դառնում։ Այն միայն հացիւ կեցցէ մարդ, ասել է Տէրը և դորանով աշխատութեան ճշմարիտ արժէքը գնահատել։ Աշխատանքը կեանքի բարձրագոյն աղբիւրը չէ և ինքնըստինքեան մարդկութեան նպատակ լինել չէ կարող։ Աւելին կասենք. քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ աշխատանքի պատուհներ են, բայց նոյն իսկ այդ քաղցր պտուղները անօգուտ են և մարդկային հոգու համար վերջնական նպատակ լինելուց շատ հեռու, եթէ դէպի բարձրագոյն, յաւիտենականութեան գաղափարը չեն ուղղուած։ Ընթերցողներին յիշեցնում ենք Ֆաուստի հոգու վիճակը, մեր միտքը կարճ և կտրուկ կերպով հասկանալի անելու համար։ Աշխատանքով կարելի է ամենամեծ գիտնականը դառնալ և ամենահարուստ մարդը, բայց մի

և նոյն ժամանակ ամենից զժրադրը մնալով: Առանց բարոյական սկզբունքների աշխատանքը ոչ միայն կեանքի բարձրագոյն բարիք չէ, այլ և վնասակար է: Անբարոյականութիւն միմիայն սեռական թերութիւնը չէ, այլ և այն «աշխատանքը», որ կործանում է ընտանեկան հասարակային, հոգեւոր բարոյական կեանքը:

Իրական մի զօրութիւն կայ միայն, որ աշխատանքը նուիրագործում է, կեանքին բովանդակութիւն տալիս, այդ է—Ահի դէպի Աստուած, որ և նոյն է դէպի ընկերը, Այն աշխատանքը, որ սիրոյ շարժառիժներով չէ ընժանում, քրիստոնեայն համար բարիք, նուիրական լինել չէ կարող: Արովհետեւ սիրոյ շարժառիժներից զուրկ աշխատանքը դէպի ազահութիւն և արծաթսիրութիւն է տանում, որ ամենայն չարեաց արմատն է (Ա. Տիմ. 2, 10): Սիրոյ շարժառիժներից զուրկ աշխատութեան զերջնական նպատակը նիւթն է միայն, այն ինչ մարդու հոգեւոր կոչումն է, իշխել նիւթի և մարմնաւորի վերայ: Այն անձնաւորութիւնը որ աշխատանքի զերջնական նպատակը միայն արծաթն է, համարում, վաստակելու ժամանակ էլ միջոցների մէջ խտրութիւն չի դնում: Արծաթսիրութեան հնազոյն պատուը վաշխն է, որի դէմ մաքառելու համար եկեղեցական հայրերը մեծ ջանք պիտի գործ դնեն: Եկեղեցու նշանաւորագոյն հայրերը՝ Եփրեմ Ասորի, Իրիզոր աստուածաբան, Ասկերերան և Յոհան Անդակունի ճառեր ունին վաշխաւորութեան դէմ, դարերով քրիստոնէական եկեղեցու մէջ քարոզի նիւթ է եղել վաշխի չարաչար գործածութիւնը: Բնդարձակ իմաստով վաշխաւորութիւնը միայն մեծ անկոսներով ուրիշն պարտք տալը չէ, վաշխաւոր կարելի է լինել կեանքի ամեն պայմաններում, երբ ետականը նիւթականը բարձր համարենք արդարութեան տեսակետից: Շահելն արգելւում չէ, մեր պարտաւորութիւնն է խորագէտ լինել, հոգալով ծերութեան, մեր որդոց դաստիարակութեան և ապագայի մասին բայց չմոռանալով երբեք արդարութեան կշիռը: Աշխատանքը այն է, եւ ինչ աշխատանք է զբաղւորողը հասարակութեան համար: Անք առանձնապէս շնչոնցիք արծաթսիրութեան մի երեւոյթ է, վաշխա-

ւորութիւնը՝ որովհետեւ այժմ էլ մեր ժողովրդական կեանքի, յատկապէս գիւղական կեանքի շարիքներից մէկն է: Յաւոք սրտի պէտք է արձանագրենք, որ նոյն իսկ մեր քահանաներից շատերը մասնակից են այդ մեղքին. վաշխաւորութեան մէջ մեծ դեր է խաղում յատկապէս ցորենը: Սակայն չհեռանանք բուն խնդրից, թէ և այս հարցն էլ կարեւոր է և արժանի առանձին խորհրդածութեան:

Դ.

Այսպէս ուրեմն աշխատանքը ինքն ըստ ինքեան բարիք չէ, նա կարող է մինչև իսկ մեծամեծ չարեաց, կեղեքման և թշուառութեան պատճառ լինել, եթէ սիրոյ և բարոյականութեան հիմունքների վերայ չէ հաստատուած: Աշխատանքը նուիրական է, երբ Աւետարանի (անտեսի առակը) և առաքելական լոյսերի բարոյական տեսակէաներով է կատարւում: Այդպիսի աշխատանքը մարդկութեան համար Աստուծոյ օրհնութիւն է և բարոյական կրթութեան միջոց: Աշխատանքով մինչև իսկ սահմանափակւում է մարդու ամենամեծ թշնամու՝ մեղքի զօրութիւնը, պարսպ և դատարկաշրջիկ մարդը աւելի հարկւած է ամեն տեսակ անբարոյական և մեղաւոր փորձանքների մէջ ընկնելու, քան ջանասէր և աշխատութեան վարժ անձը: Մարմինը ձնշելու և հոգեւորը զօրացնելու արդար և արգասալից միջոցը աշխատանքն է:

Այս խօսքը վերաբերում է ոչ միայն եկեղեցու սպասաւորներին, այլ և բոլոր քրիստոնեայ, աշխարհիկ մարդկանց: Կար ժամանակ, որ այդ նպատակին հասնելու միակ միջոցը ճգնողական խիստ կեանքն էր համարւում, մարդիկ կեանքի մէջ իրենց ուրոնած սրբութիւնը չգտնելով, հեռանում էին անսպասելի այնտեղ իրենց հոգու խաղաղութիւնը պահպանելու: Բացատրութեան կարօտ չենք համարում, որ ներկայի համար այդ հայեացքը միակողմանի է: Ճգնողական (ոչ անսպասական) գողափառի մէջ այն ծշմարտութիւնը կայ, որ դորանով կրթւում ենք մեր կամքը, առանց որին անընդունակ կլինենք բարոյական սկզբունքները աշակերտ լինելու: Եւ

պենհատուէր մեծ փխխտութեան քրիստոնէութեան արժէքը այդ տեսակետով էր միայն դիտարարուած: Բայց չափապէս ճշնորդականութիւնը նոյնպէս մտորութիւնն է: Ինչպէս ամեն մի չափանշութիւն ընդհանրապէս: Մենք տեսնէինք հասարակութեան մէջ և հասարակութեան համար ապրեւելի որպէս զիտմանամեծ պատուէրը՝ սիրոյ պատուէրն իրազորակէ կարողանանք: Կամքի կրթութեան հոգեւորը զօրացնելու և մարմնաւորը ձեւելու լուսադոյն և արդար ճանապարհն աշխատութիւնն է:

Բարոյական և սիրոյ շարժառիթներով կատարուած աշխատանքը Աստուծոյ օրհնութեան ամենամեծ ազդեւորն է: Այնտեղից են բխում քաղաքակրթութիւնն, գիտութիւնն, արուեստն, դրձնական արհեստներն, ճանապարհների հաղորդակցութիւնն, փաճառակներութիւնն, բարեգործական և ուսումնական հաստատութիւնները: Մի խօսքով մարդկային յառաջագիմութեան բարոյական կատարելութեան խթանն ու միջոցը աշխատանքն է: Բայց քրիստոնէական ծառայութիւնը աշխատանքը: Մեր ընտանիքի հացը վաստակելու լինինք, թէ միլիոնների հետ խաղանք, միշտ նոյն սկզբունքն է, որ աշխատանքը բարոյական բարիք է դարձնում: Եթէ մեր փաճառաշահ քաղաքների գործարանական և բանուորական կեանքը աչքի տեսնում ենք, ահա, ահա, թանձրացեալ և կենդանի կերպով կարողանայինք քրիստոնէական աշխատանքի գաղափարը պարզել: Բայց մեր նպատակն է միայն քրիստոնէական սկզբունքը շոտափել առանց կեանքի մանրամասնութիւնների մէջ մանկելու:

Ե.

Նստերի համար դուցէ դարմանալի լինի որ բարոյական աշխատանքը մենք քրիստոնէութեան անուան հետ ենք կապում: Միթէ քրիստոնէութիւնից առաջ աշխատանք չկար: Աշխատանքը հին է այնքան, որքան հին է մարդկութիւնը: Բայց դրականապէս կարող ենք ասել, որ աշխատանքը սրբուել է բարոյական գաղափար է դարձել միմիայն քրիստոնէութեան մէջ: Այս խօսքի ճամբարութիւնը հասկանալի կլինի այն անձնաւորութիւնների համար, որոնց յայտնի է Յու-

նասանի և Հռոմի անկման պատմութիւնը և այն ժամանակուայ այս երկու քաղաքակրթութիւնն ազգերի հայեացքը աշխատանքի մասին: Տեղի սղութեան պատճառով մենք միայն մի քանի խօսքով կարող ենք նկարագրել այդ, ով կամեաւ է փոքր ինչ աւելի ընդարձակ գաղափար ստանալ այս մասին: յանձնարարում ենք կարգաւ Մ. Գ. Լ. Հռոմի պատմութիւնը: Աթէնքում և Հռոմում ժողովուրդը նպատ էր ստանում պետութիւնից, յատկապէս Հռոմի քաղաքացիք բաժին էին ստանում պատերազմական աւարներից, ցորեն էին ստանում պետական շահմարաններից, ձրի գուարձութիւնն ինչոյքների նոյն իսկ դրամական նուէրներ զօրապետների յաղթական փերագարձի կամ կայսերական հանդէսների ժամանակ: Այսպիսով պատ քաղաքացիք հեռահեռ, սովորեցին ձրերակերութեան և խուսափում էին աշխատանքից: Հռոմիական սենատորների կամ աշխուժականների կէնքերը լի էին փողոցներում կամ հետեւում իրենց տիրոջ պալատում: Բայց ամենամեծ չարիքը այս տեսակետից սարկութեան գոյութիւնն էր: աշխատանքը փոյել էր սարկին և ոչ ազատ մանաւանդ աղկուական և հարուստ քաղաքացուն: Ազգաւէտ Խաղիան հիւսիսային Աթրիկայի շատ մասերը քրիստոնէութեան ծագման ժամանակ ծածկուած էին դեղեցիկ և ընդարձակ պարտէզներով, երկներով լի անտառներով, դարդարուած արհեստական մեծ լճերով, ծաղիւնոյններով, ապարաններով, ... շատ քչերի գուարձութեան ծառայելու համար: Բնականաբար սենատորների ընդարձակ կալուածներում, ամարանոցի պարտէզներում աշխատում էին սարուկները, այն էլ ոչ այնքան հազն արդիւնաւորելու, որքան իրենց տիրոջ շոտութիւնների և գուարձութիւնների համար: Ամառականութիւնն արհեստների նոյն իսկ երկրագործութեան մնացորդները սարուկների ձեռքն էր: Աշխատանքն անկայել էր ազատ քաղաքացուն աղկուատում մարդկանց որոնք պէտք է ինչոյքների փխխտութեամբ քաղաքական պաշտոններով զբաղուէին: Ազատ արհեստաւոր քաղաքացին հարուստ սարկատիրոջ հետ մաքաւել չէր կարող և այդպիսի ար-

Հետաւորն էլ նոյնչափ յարգ ունէր, որքան սարուէր: Այսպիսի հասարակութեան մէջ աշխատանքը բարոյական գաղափար լինել չէր կարող: Քրիստի հարստութեան սէրը զբանով ի հարկէ ամենեւին չէր սահմանափակուած, ընդհակառակն ազահտութիւնը ստանց միջոցների խորութեան հարստանալու տենչը յատուկ է այն անձնաւորութեան և այն հասարակութեան, որ չի սիրում իւր երեսի քրտինքով հաց վաստակել: Արդարեւ ոչ մի անգ ժաշխատութիւնը այնպիսի չարիք չէ գործել, ինչպէս հին Հռոմում: Մայրաքաղաքի օրինակին էին հետեւում՝ ըստ ամենայնի պետութեան բոլոր մեծ քաղաքները՝ Աղեքսանդրիա, Անտիոք և ինչ Ահա այսպիսի հասարակութեան մէջ՝ հընչում է քրիստոնէութեան բարոյական քարոզը աշխատանքի մասին: Ի՛նչպիսի նորութիւն և ի՛նչպիսի կենդանարար զօրութիւն էր այս քարոզը, ցոյց է տալիս մեզ պատմութիւնը:

9.

Քրիստոնէական եկեղեցու պատմութեան մէջ կտրմիր թելի նման անցնում է աշխատանքի բարոյական այս քարոզը: Առաջնալի խօսքերի համաձայն աշխատութիւն և բարեգործութիւն գուզընթաց են եկեղեցու պատմութեան մէջ: Հռոմէական պետութեան մէջ ազատ բարոյական աշխատանք չկար ուստի և բարեգործութիւն չկար աւետարանի մտքով: Մենք առիթ ենք ունեցել «եկեղեցի և աղքատների խնամատարութիւն» վերնադրով յօդուածների մէջ նկարագրել հեթանոսական «բարեգործութեան» բարոյականութիւնից զուրկ կողմերը: Քրիստոնէական բարեգործութիւնն ու աշխատութիւնը սկսուել է նոր կրօնի ծագման հետ, բայց իւր զարգացման բարձրագոյն աստիճանին հասել է վանականութեան մէջ, այնտեղ էլ հիմնուել ճշմարիտ աշխատասիրութեան զրարոյցը, ուր աշխատել սովորեցին քրիստոնէութեան բարեբար աղգեցութեան ենթարկուած աղղերը: Իմ խօսքս ձգնաւորութեան անապատականութեան մասին չէ, որ չափազանց ծայրայեղ բնաւորութիւն էր ստացել պատմական հանգամանքների պատճառով: Այս

նականութեան կանոնների մէջ շատ կարեւոր տեղ է բռնում աշխատանքի գաղափարը, իսկ նախկին վանականութեան մէջ, ինչ որ կանոն էր այն էլ իրագործուում էր կեանքի մէջ: Բարսեղ Անտարացու և նորան հետեւող անձանց հանձարը լաւ բմբունել էր բարոյական այն վտանգը, որ առանց զրական և կանոնաւոր աշխատանքի ծագել կարող էր միայնակեացներից կազմուած միաբանութեան մէջ: Պարագութիւնը վանականին զէպի բարոյական անդունդ կարող է առաջնորդել ուստի և այնպիսի կազմակերպութիւն էին տուել վանականութեան, որ զէպի կեանք և փրկութիւն տանէր: Վանականը ոչ միայն իւր հացը պիտի վաստակէր, այլ և թշուառներին, կոյրերին, որբերին, աշխատելու անընդունակ եղբայրներին օգնելու միջոց ունենար: Աշխատանքն սկսւում էր աղօթքով և շաղմուկագութիւններով, իւրաքանչիւրն աշխատում էր ինչի ընդունակ էր կամ ինչպէս վանահայրն էր կարգադրում, նոքա զբաղւում էին արհեստներով, երկրագործութեամբ, պարտիզարանութեամբ, գրական վաստակներով, արուեստներով, քարոզութեամբ, հիւանդների և աղքատների խնամատարութեամբ, որբերի կրթութեամբ և ինչ Բարսեղ Անտարացու կանոններն անցնում են և Հայաստան: Հայոց վանքերում ևս ծագւում է քաղաքակրթութիւնն ու բարեգործութիւնը, ինչպէս ուրիշ երկրներում: Մասլլ գաղափարներից ազատ չէ, ոչ ասորա-յուդական և ոչ մեր վանականութիւնը, բայց այնքան մեծ, այնքան գնահատելի է, նորա արդիւնքը, որ մենք աստուածային օրհնութիւն ենք համարում այդ երկւոյթը պատմութեան մէջ:

Ինչ որ ատացինք արեւելեան աղղերի վանականութեան մասին, նոյնը աւելի մեծ չափով կարող ենք ասել արեւմտեանի համար: Այստեղ վանականութիւնը աշխատասիրութեան ճշմարիտ զարոյց է դառնում արեւմտեան կիսակրթ աղղերի համար: Ճահիճներ չորացնելու, ճանաչարհներ և կամօրջներ շինելու, բանաւոր երկրագործութեան, արհեստների և արուեստների գիտութեան առաջին ուսուցիչները Պալերի և դերմանական եղղերի համար վանականներն են եղել:

Թող հայ ժողովրդի բոլոր գասի սրտում
անջինջ զրոշմունքն առաքնայի խոսքերը:

«Որ ոչ կամիցի գործել և կեցիցի մի»

«Մի ձանձրանայք զբարիս գործել»

Գ. Վ. Յովսէփեան

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՌԻՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Հոկտ. 16-ին լրացաւ Ռուսաց եկեղ. պատրիարքութիւնը վերջացնելու 200-ամեակը: 1700 թ հոկտ. 15-ի լոյս 16-ի գիշերը Մոսկուայում վախճանուեցաւ համայն Ռուսաց պատրիարք Ագրիան (տաներորդը և վերջինը պատրիարքական շարքի): Նորա մահից յետոյ նոր Պատրիարք չընշանակուեցաւ: Իսկ հոգեւոր գործերը, կամ ինչպէս ասուած է 1700 թ. դեկտեմբեր 16-ի հրովարտուում— «հերձուածներին, եկեղեցու հակառակութեան և աշանդներին գործերը յանձնուեցան Ռեազանի մետրապօլիտ Ստեփան Եւփօսկուն: Պատրիարքական աթոռի տեղապահ (благочинный патриаршего престола) տիտղոսով: Պատրիարքական աթոռի միւս բոլոր հարցերը սկզբում բաժանուեցան պետական զանազան առեանների մէջ, իսկ յետոյ՝ 1701 թ. յունուար 24-ին նորից հաստատուած վանական կառավարութեան: որ ոչ մի հոգեւոր իշխանութեան չէր ենթարկուում: 1721 թ. յունուար 25-ին հաստատուեցաւ Սինօդը, որ և այդ օրից կառավարում է Ռուսաց եկեղեցին անընդհատ: Թէև իւր երկդարեան կեանքում բաւական զգալի փոփոխութիւններ է կրել իւր կազմակերպութեան և իրաւասութեան և նշանակութեան տեսակետից: Պատրիարքութեան հետ համեմատած Սինօդը առաւել քիչ ազդեցիկ հաստատութիւն ճանաչուեցաւ: սկզբում նա միայն հոգեւոր առեան էր, միւս 12 առեաններից մէկը միայն: ինչպէս միւս բոլոր առեանները նա ևս ենթարկուած էր ձերակոյտին (Сенатъ), նորա անգամները նշանակուում էին աշխարհիկ իշխանութեան ձեռքով և ցանկութեամբ և նոցանից ոչ մէկի մշտքովն անգամ չէ անցել նախկին պատրիարքական շուքի և փառքի մասին երազել: որով շրջապատել գիտէին իրենց «ընդհանուր ռուսական մետրապօլիտները»: Մոսկուայի պատրիարքները, սկսած Քիլարէտից և մանաւանդ, Նիկոնից, մի

բոլորովին բացառիկ դիրք էին գրաւել Մոսկուայի պետութեան մէջ. պատրիարքը պաշտօնապէս կոչուում էր «մեծափառ տէր»: այսինքն Նիկոն տիտղոսն էր կրում ինչ որ Մոսկուայի թագաւորը: Այս միայն պետութեան լայնասահման տարածութեան բոլոր կրօնական խնդիրները, այլ և նորան էր վերապահուած բոլոր հոգեւորականների գաւառական գործերը, ինչպէս նորանից կախումն ունէր պետութեան ամեն ծայրում ընդարձակ և հարուստ եկեղեցական կայքը. և վերջապէս պատրիարքն անմիջական մասնակցութիւն ունէր պետական բոլոր կարեւոր գործերի մէջ, որով և Մոսկուայի մէջ հոգեւոր իշխանութիւնը մի բոլորովին անկասի, ինքնուրոյն ոյժ էր կազմում և հետզհետէ աւելի ու աւելի ազդեցիկ դառնում: Պատրիարքի տեղ Սինօդ հաստատելով, Պետրոս Մեծը նորա բոլոր իշխանութիւնը յանձնեց պետական հաստատութիւններին:

Այսպիսի էական կերպարանափոխութիւնը և նոր կազմակերպութիւնը նոյն ժամանակամիջոցի ընդհանուր պայմանների արդիւնք էր և ոչ Ագրիան պատրիարքի անձնական գործունէութեան: Մոսկուայի վերջին պատրիարքը պատմական խոշոր անձն չէր. նորա առաջին 50 տարուայ կեանքի մասին համարեալ ոչինչ տեղեկութիւն չկայ: 51 տարեկան հասակում միայն նշանակուում է Չուսով վանքի վանահայր: 1682 թ. դէպքերի զուգարկապետութեամբ նա բաւական դեր խաղաց մայրաքաղաքում ծագած խռովութեան ժամանակ, նորա միջոցով էին կատարուում բանակցութիւնները, Երբ Իսաան և Պետր Ալէքսէեիշ արքայորդիները Սօֆիա ինամակաւ հու հետ Մոսկուայից Տրօիցէ - Սերգիւ վանքը փախան: Իսակիմ պատրիարքը ուղարկեց Ագրիան վարդապետին «յայտնելու» արքայորդիներին, թէ զօրքերը (стрѣлы) զղացել են և խնդրում են Մոսկուա դառնալ: Չորս տարի յետոյ (1686 թ.) Ագրիանը նշանակուեցաւ Պազանի մետրոպօլիտ: Իսակիմ պատրիարքի մահուանից (1690 մարտ 17) չորս ամիս յետոյ՝ պատրիարքական ընտրական ժողովում ձայների բաժանում եղաւ: ոմանք կամենում էին ընտրել Պսկովի մետրապօլիտ Մարկելին, որ եւրոպական կրթութեամբ շնոր ուղղութեան և զարգացած մարդ էր, միւսները ցանկացան Ագրիանին, որ յայտնի էր իւր բուն ռուսական հոգու տէր և պահպանողական ուղղութեամբ: Պրիւստրապէս այրի թագուհի Նատալիա Պրիւսովնայի ցանկութեամբ, որ «ցաւ ի սիրտ ականատես էր Պետրոսի նորամուծութիւններին» — առաջարկուած երեք թիկնածուներից, հակառակ Պետրոսի ցանկութեան՝ Պատրիարքական աթոռ է բարձրանում Ագրիան 1690 թ. օգոստ. 24-ին: Ագրիան թողել է միայն մի քանի վարդապետական զրուցիւններ, որ առանձին մի արժէք չունին: Նոր պատրիարքը թէև հակառակ էր Պետրոսի նոր ուղղութեանց,